ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.04.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/131

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ ՀՀ Վարչապետի աշխատակազմ
Մասնակից՝ «Ինֆրեյմ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-22/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կարիքների համար տեսաֆիլմերի արտադրության, լուսանկարահանման և մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող /սոցիալական ցանցերի առաջմղում/ ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4956-2022 գրությամբ «Ինֆրեյմ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Վարչապետի աշխատակազմի 17.03.2022թ.-ի թիվ 02/18.17/8148-2022 գրության հիման վրա, 24.03.2022թ.-ին «Ինֆրեյմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 24.03.2022թ.-ին:

24.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/131 համարի ծածկագիրը:

01.04.2022թ.-ին և 08.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 01.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.04.2022թ.-ին:

2. ՀՀ Վարչապետի աշխատակազմի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ Վարչապետի աշխատակազմը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 17.03.2022թ.-ի թիվ 02/18.17/8148-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի կարիքների համար տեսաֆիլմերի արտադրության, լուսանկարահանման և մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող /սոցիալական ցանցերի առաջմղում/ ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-22/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգ: Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Ինֆրեյմ» ՍՊԸ-ն, հայտերի բացումից հետո, գրությամբ հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի

45-րդ կետը, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Ինֆրեյմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-22/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընթացակարգ ընթացակարգի մասնակից՝ «Ինֆրեյմ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Ինֆրեյմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.01.2022թ.-ին գրությամբ դիմել է «Ինֆրեյմ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4956-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2022/131 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Վարչապետի աշխատակազմի կողմից Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կարիքների համար տեսաֆիլմերի արտադրության, լուսանկարահանման և մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող /սոցիալական ցանցերի առաջմղում/ ծառայությունների ձեռքբերման նպատակով 04.03.2022թ.-ին հայտարարվել է «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-22/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ինֆրեյմ» ՍՊԸ-ն:

iii. «Ինֆրեյմ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-22/7» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Մասնակիցը 14.03.2022թ.-ին դիմում է ներկայացրել Պատվիրատուին և հայտնել է, որ ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված Հավելված 2-ում՝ գնային առաջարկում 1-ից 5-րդ չափաբաժինների համար ներկայացրել է միավորի արժեքներ, ինչով պայմանավորած հրաժարվում է գնման գործընթացի մասնակցությունից:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.03.2022թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության 3.2.2 կետի համաձայն՝ «Ինֆրեյմ» ՍՊԸ-ն հրաժարվել է գնման ընթացակարգի հետագա մասնակցությունից:

vi. Նույն արձանագրության 4.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Ինֆրեյմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4956-2022 գրությամբ «Ինֆրեյմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Վարչապետի աշխատակազմի կողմից Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կարիքների համար տեսաֆիլմերի արտադրության, լուսանկարահանման և մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող /սոցիալական ցանցերի առաջմղում/ ծառայությունների ձեռքբերման նպատակով 04.03.2022թ.-ին հայտարարված «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-22/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «Ինֆրեյմ» ՍՊԸ-ն 14.03.2022թ.-ին դիմում է ներկայացրել Պատվիրատուին՝ հրաժարվելով գնման գործընթացի հետագա մասնակցությունից: Հանձնաժողովի 15.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.2.2 կետով արձանագրվել է, որ «Ինֆրեյմ» ՍՊԸ-ն հրաժարվել է գնման ընթացակարգի հետագա մասնակցությունից,

ինչով պայմանավորված արձանագրության 4.1-րդ կետով որոշում է կայացվել Մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ինֆրեյմ» ՍՊԸ-ն, Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո հրաժարվելով «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-22/7» ծածկագրով գնման գործընթացի հետագա մասնակցությունից, ըստ էության, հրաժարվել է ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4956-2022 գրությամբ «Ինֆրեյմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/131 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ինֆրեյմ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**